Հավելված 2
«23» հունվարի 2025 թ. -ին
Կնքված N «ԴՏՊ-11414-11018/25 ՀԿԱՐԳ11» պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 1**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»<br>Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոն |
| **Դրամաշնորհի N** | «ԴՏՊ-11414-11018/25 ՀԿԱՐԳ11» |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | *ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն* |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | *«Հայկական Կարիտաս» Բարեսիրական ՀԿ* |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | *03.01.2025-31.12.2025* |
| **Հաշվետու ժամանակահատված** | *03.01.2025-31.03.2025* |
| **Ներկայացման օր** | *11.04.2025թ* |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Սոնա Խաչիկյան, կենտրոնի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

*<u>Միջոցառումը նպատակ է հետապնդում</u> ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու, երեխայի (ընտանիքի) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով գնահատված սոցիալական կարիքների հիման վրա համարժեք ծառայությունների տրամադրում, ինչպես նաև նպաստել երեխաների սոցիալ-հոգեբանական, կյանքի հիմնարար հմտությունների զարգացմանը, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալ-վերականգնողական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և սոցիալական մեկուսացումը, ապահովելու ընտանիքի հետ վերամիավորումը՝ նպաստելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը:*

<u>Համառոտ նկարագիր հաշվետու ժամանակահատվածի վերաբերյալ:</u>

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում իրականացվել է երեխաների տվյալների հավաքագրում, կարիքի գնահատում և վերագնահատում: Պարբերաբար թարմացվել է երեխաների տվյալների բազան և կենտրոն հաճախման գրաֆիկը՝ ըստ անհատական սոցիալական ծրագրերի հիման վրա:
Օրեկան կենտրոն է հաճախել **18-36** երեխա և մասնակցել են կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին:
Կենտրոնում շահառուներին մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

- Սոցիալական
- Հոգեբանական
- Լոգոպեդի / խոսքի զարգացում/
- Անձնական ուղեկցողի
- Խմբավարի
- Սննդի տրամադրում / տաք ճաշ կենտրոնում

Կենտրոնի գործողությունների իրականացմանը ներգրավված են եղել 1 համակարգող, 3 սոցիալական աշխատող, 1 հոգեբան, 1 լոգոպեդ, 1 խմբակավար, 1 խոհարար, 1 տնտեսուհի, 1 տնտեսվար-վարորդ: Իրականացված բոլոր գործողությունները պլանավորվել և իրաականացվել են ծրագրի ղեկավարի գիտությամբ ու համագործակցությամբ:
Կենտրոնը հագեցված է գրենական և դիտակտիկ բոլոր անհրաժեշտ պարագաներով, որոնք մասնագետները կիրառում են անհատական և խմբային աշխատանքների, միջոցառումների իրականացման ժամանակ:
Սոցիալ-հոգեբանական աշխատանք է իրականացվել շահառու երեխաների, ծնողների և նրանց ընտանիքի անդամների հետ: Շահառու երեխաները ընդգրկված են եղել կենտրոնի կողմից մատուցվող ծառայություններին, սոցիալական կարողությունները զարգացնող միջոցառումներին՝ ըստ գնահատված սոցիալական կարիքների և անհատական սոցիալական ծրագրի:
Հաշվետու ժամանակահատվածում գնահատվել և վերագնահատվել է շահառու ընտանիքների սոցիալական կարիքները, մշակվել և վերամշակվել են անհատական սոցիալական ծրագրերը:

երեխաները ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում ապահովված են ամենօրյա տաք սննդով, հիգիենիկ պարագաներով և գրենական պարագաներով:
Փոքրիկ Իշխան կենտրոնի շահառու երեխաները կենտրոնում զբաղվում են տարաբնույթ քարտային ժամանցային ու ինտելեկտուալ խաղերով, փազլներով, սպորտային սեղանի խաղերով ինչպիսիք են շախմատը, շաշկին, սեղանի թենիսը, բոուլինգը, որոնք նպաստում են երեխաների ուշադրության, ինտելեկտուալ և ստեղծագործական մտածողության, մտահորիզոնի զարգացմանը ձևավորմանը, նրանք դառնում են ինքնուրույն, կարողանում են միասնական որոշումներ կայացնել, համագործակցել:
Կենտրոնում զարգացնող խաղերի առկայությունը նպաստում է երեխաների ճկուն մտքի ձևավորմանը, բարձրացնում է ընդհանուր ինտելեկտը, զարգացնում ճկունությունը, շարժումների կոորդինացիան: Խաղերը նպաստում են հայերեն լեզվի ճիշտ կիրառմանը, պահպանմանը, զարգացմանը առօրյա միջավայրում, զարգանում է լակոնիկ խոսքը:

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.**

**Կանանց միջազգային օր:** Մ/թ մարտի 12-ին, Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> սոցիալական խնամքի ցերեկային կենտրոնը և Գավառի Տնային խնամք միայնակ տարեցներին ծրագիրը համատեղ իրականացրեցին <<Շնորհակալություն>> խորագիրը կրող միջոցառում՝ նվիրված կանանց միջազգային օրվան:
Միջոցառումը համախմբել էր <<Փոքրիկ Իշխան>> կենտրոնից **10** շահառու/ որից **5 ծնող, 5 երեխա**/ և Տնային խնամք ծրագրից **7** շահառու: Միջոցառմանը մասնակցել է ընդհանուր թվով **28** մասնակից՝ ներառյալ ծրագրային թիմերի ներկայացուցիչները:
Միջոցառման ընթացքում Գեղարվեստական պարային կատարումով հանդես եկան կենտրոնի **3** սաները և կենտրոնի 1 շրջանավարտը՝ երաժշտական կատարմամբ: Միջոցառումը մեկնարկեց Տնային խնամք ծրագրի սոցիալական աշխատողը՝ ողջունելով շահառուներին և ներկայացնելով միջոցառման նպատակը:
Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Ղարաղյանը երեք սերունդների ներկայացուցիչների /երեխաներ, մայրեր, տատիկներ/ ակտիվ ներգրավմամբ իրականացրեց սոցիալական խմբային աշխատանք, որի միջոցով վերջիններս ներկայացրեցին իրենց երազանքները, նպատակները, մտքերը, հիշողությունները:
Միջոցառման մասնակիցները կազմակերպության կողմից ստացան նվերներ:

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 7 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները:**

**1. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների գնահատված կարիքներ:**

Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկանին խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **66** երեխայի հետ, որից՝ **28** աղջիկ, **38** տղա:
Իրականացվել են շահառու ընտանիքների դիմումների ընդունում, փաստաթղթերի հավաքագրում, կարիքների գնահատում և ԱՄԾ-ների կազմում:Պարբերաբար թարմացվել է և համալրվել է շահառուների անձնական տվյալների բազան:
Ըստ **66** շահառուների շրջանում գնահատված կարիքների՝ կենտրոնի ԿԴԻՀ երեխաներն ու նրանց ընտանիքները, ովքեր ունեն սոցիալականացման և զարգացման ընթացքը խոչընդոտող զանազան հիմնախնդիրներ: Ծրագրի շահառուները մասնավորապես առանձնացվել են ըստ հետրևալ սոցիալական խմբերի՝

- Միածնող ընտանիքի երեխաներ- **9**
- Ոստիկանությունում հաշվառված, իրավախախտ երեխաներ-**1**
- Վարքային դրսևորումներ ունեցող երեխաներ-**4**
- Անբարենապաստ, կոնֆլիկտային ընտանիքի երեխաներ-**1**
- Սոցիալ-տնտեսապես անապահով ընտանիքի երեխաներ-**34**
- Արցախի հանրապետությունից բռնի տեղահանված ընտանիքի երեխաներ –**12**
- Հաշմանդամություն և/կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներ-**5**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **46** ընտանիքի հետ:
Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել **56** ընտանիքի անդամների հետ, որից **46** մայր, **6** հայր, **2** տատիկ, **1** քույր, **1** պապիկ:

Ըստ իրականացված հետազոտության ծրագրի **46** շահառու ընտանիքները պատկանում են հետևյալ տեսակների՝

- Ընդարձակ ընտանիքներ– **21**
- Նուկլեար ընտանքներ- **20**
- Միայնակ ընտանիք - **4**
- Առանձնացված ծնողների ընտանիք - **1**

Ըստ գնահատված կարիքների շահառու ընտանիքներից **32**-ը ստանում են ընտանեկան նպաստ, գործազուրկ ծնողների թիվը կազմում է **26** (որից **23** մայր, **3** հայր), աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է **45** (որից **23** մայր, **22** հայր), արտագնա աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է **5** (հայր), հաշմանդամություն ունեցող և անաշխատունակ ծնողների թիվը կազմում է **6** (հայրեր):

**2. Անհատական սոցիալական ծրագրերով սահմանված և ամբողջությամբ իրականացված միջոցառումներ:**

<u>**Ամենօրյա տաք սնունդ կենտրոնում:**</u> Հաշվետու ժամանակահատվածում օրեկան կենտրոն է հաճախել **18-36** երեխա և մասնակցել է կենտրոնի կողմից իրականացվող ծառայություններին: Կենտրոն հաճախող յուրաքանչյուր երեխա օգտվել է ամենօրյա տաք սննդից:
Կենտրոնում ճաշը պատրաստվել է կենտրոնի խոհարարի կողմից՝ ըստ նախորոք մշակված ճաշացանկի:
Շահառուների հաճախման գրանցամատյան է վարվել սոցիալական աշխատողների կողմից: Խոհանոցում ևս վարվել է ամենօրյա գրանցամատյան:

<u>Սոցիալական աշխատողների կողմից</u> կազմվել և պարբերաբար թարմացվել են փաստաթղթերը, մասնավորապես լրացվել են հետևյալ փաստաթղթերը՝

- Առաջնային տնային այցելության թերթիկ
- Երեխայի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանիքի կարիքների գնահատում
- Շահառուի և ընտանիքի կարիքների վերագնահատում
- Սոցիալական պատմության հավաքագրում
- Գենոգրամի և էկոգրամի կազմում
- ԱՄԾ-ի (միջամտության պլան) կազմում
- Օրագրերի կազմում և թարմացում
- Անհատական սոցիալական աշխատանքի թերթիկ
- Ընտանիքի անդամի հետ աշխատանքի թերթիկ
- Ընթացիկ տնային այցելության թերթիկ
- Դպրոց այցելության թերթիկ
- Թիրախ խմբերի հետ աշխատանքի փաստաթղթավորում
- Նվիրատվության բնույթի պայմանագրերի կազմում և կնքում

<u>Հոգեբանը</u> կազմվել է հետևյալ փաստաթղթերը՝

- Երեխայի անհատական քարտի լրացում
- Խորհրդատվություն երեխայի հետ
- Խորհրդատվություն ընտանիքի անդամների հետ
- Հոգեբանական աշխատանքի թերթիկ
- Տնայցեր
- Թիրախ խմբերի հետ աշխատանքի փաստաթղթավորում

<u>**Տնայցեր:**</u> Կենտրոնի սոցիալական աշխատողները հաշվետու ժամանակահատվածում իրականացրել են **16** տնայց, որից՝ **1**-ը առաջնային հետազոտության տնայց և **15**-ը ընթացիկ տնայցեր:

- Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը իրականացրել է **1** ընթացիկ տնայցին այցելություն:
- Բազմամասնագիտական թիմով իրականացվել է **15** տնայց: Թիմը ներառել է սոցիալական աշխատող, հոգեբան, համակարգող, տնտեսվար:

<u>Առաջնային տնայցի</u> նպատակն էր հետազոտել ընտանիքի կենսապայմանները, ընտանիքի կազմը, զբաղվածությունը, երեխայի և ընտանիքի առաջնային կարիքները, դուրս բերել երեխայի հետաքրքրությունները, ուսումնական առաջադիմությունը: Առաջնային

հետազոտության հիման վրա իրականացվել է կենտրոնի բազմամասնագիտական թիմային քննարկում՝ կենտրոնում շահառուների ընդգրկման նպատակով:

<u>Ընթացիկ տնայցերը</u> իրականացվել են շահառուների կարիքները վերագնահատելու նպատակով, ընտանիքում տեղի ունեցած փոփոխությունները արձանագրելու նպատակով: Բազմամասնագիտական թիմի կողմից այցեր կատարվել են՝ շահառու ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով:

**<u>Դպրոցայցեր:</u>** Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանի կողմից իրականացվել է 1 դպրոցայց:
Հանդիպում է տեղի ունեցել Ս. Գ.-ի դասղեկի հետ, որի ընթացքում քննարկվել է երեխայի դպրոցում դրսևորած վարքը, միջանձնային փոխհարաբերությունների բնույթը դասընկերների և ուսուցիչների հետ: Անդրադարձ է եղել ուսումնական պրոցեսին ներգրավածությանը, ինչպես նաև բացակայություններին:

**<u>Հանդիպում ծրագրի շահառու երեխաների հետ:</u>** Հաշվետու ժամանակահատվածում հանդիպում է տեղի ունեցել ծրագրի շահառու **65** երեխայի հետ (որից՝ **28** աղջիկ, **37** տղա): Հանդիպումը իրականացվել է կենտրոնի սոցիալական աշխատողների կողմից: Հանդիպման ընթացքում ներկայացվել են կենտրոնի թիրախ խմբերում երեխաների ընդգրկվածությունը և վերջիններիս հաճախման ժամագրաֆիկը:

**<u>Հանդիպում ծրագրի շահառու ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>** Հաշվետու ժամանակահատվածում տեղեկատվական հանդիպում է տեղի ունեցել կենտրոնի կարգավանոնի վերաբերյալ **23** շահառուի մասնակցությամբ:

## <u>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ</u>

**<u>Անհատական սոցիական խորհրդատվություն:</u>** Կենտրոնի սոցիալական աշխատողները իրականացրել են անհատական խորհրդատվություններ **66** երեխայի հետ, որից՝ **28** աղջիկ, **38** տղա:

- Սոցիալական աշխատող *Տ. Դաբաղյանի* կողմից իրականացվել է **34** անհատական սոցիալական խորհրդատվություն: Անհատական խորհրդատվությունները շահառու երեխաների հետ իրականացվել են ուղղված կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, սոցիալական պատմության, գենոգրամի և էկոգրամի, անհատական միջամտության պլանի կազմմանը: Անհատական խորհրդատվություններ իրականացվել են նաև ուղղված ընտանեկան և միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, սոցիալական հմտությունների, էթիկայի կանոնների յուրացմանը, ինքնաճանաչմանը, ճկունությանը, միջանձնային կոնֆլիկտների կարգավորմանը, կենտրոն հաճախելու գրաֆիկի հստակեցմանը, կատարվելիք աշխատանքների պլանավորմանը:

- Սոցիալական աշխատող *Ն. Գևորգյանի* կողմից իրականացվել է անհատական խորհրդատվություն թվով՝ **32** շահառուների հետ, որից՝ **12** աղջիկ, **20** տղա: Անհատական աշխատանքները ուղղված են եղել շահառուների մոտ առկա խնդիրների հաղթահարմանը: Ըստ անհատական ուսուցման պլանի կազմված շահառուների մոտ առկա խնդիրները կապված են՝ շահառուների ինքնաճանաչման բացահայտման, շփման, հաղորդակցման ոլորտի զարգացման, ծնող-երեխա հարաբերությունների կարգավորման, ինքնադրսևորման կարողության զարգացման, միջանձնային հարաբերությունների

կարգավորման, կոնֆլիկտայնության նվազեցման, հակասոցիալական վարքագծի կարգավորման, էթիկայի կանոնների յուրացման: Կատարված աշխատանքները նպաստել են մասամբ վերը թվարկված խնդիրների կարգավորմանը, աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

**<u>Խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>**

- Կենտրոնի սոցիալական աշխատող *Ն. Գևորգյանի* կողմից անհատական խորհրդատվություն է իրականացվել թվով **23** շահառու ծնողի **որից 21** մայր, **2** հայր: Անհատական խորհրդատվությունները ուղղված են եղել շահառուների և ընտանիքի կարիքների դուսրբերմանը, երեխաների սոցիալական միջավայրի դուսրբերմանը, ծնող-երեխա **հարաբերությունների կարգավորման**, **տարիքային առանձնահատկությունների** հետ կապված դժվարությունների հաղթահարմանը:
- *Սոցիալական աշխատող Տ. <u>Դաբաղյանը</u>* անհատական խորհրդատվություն է իրականացրել **30** շահառուի հետ, որից **3** հայր, **25** մայր, **1 քեռի**, **1** պապիկ: Հանդիպումները ուղղված են եղել երեխայի և նրա ընտանիքի կարիքների գնահատմանը և վերագնահատմանը, և ընտանիքի **սոցիալական միջավայրի, կապերի**, ընտանիքում փոխհարաբերությունների **բնույթի բացահայտմանը**, ինչպես նաև վերհանվել են շահառու երեխաների առանձնահատկությունները, նախասիրությունները, **ունեցած** դժվարությունները: Քննարկվել են նաև հարցեր կապված երեխաների հետ միջամտության պլանի կազմմանը:

<u>ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ</u>

**<u>Անհատական հոգեբանական խորհրդատվություն</u>** իրականացվել է **66 երեխայի** հետ, որից **28 աղջիկ**, **38 տղա**: Աշխատանքները իրականացվել են եղել այն **երեխաներին**, **ովքեր** ունեն հուզական, հոգեխոսքային, նյարդային գերակտիվություն, օժտված են վարքային դրսևորումներով և այն երեխաների հետ, ովքեր չեն համապատասխանում իրենց տարիքային զարգացմանը:
Անհատական աշխատանքի նպատակը հետևյալն էր՝ լիարժեք պայմաններ ստեղծել անձը զարգացնելու հարցում, **թերապիաների** միջոցով օգնել **հասկանալ իրենց** անհատական առանձնահատկությունները, խնդիրները, պատճառները, խանգարող հանգամանքները, սեռատարիքը, որի ընթացքում երեխան գտնվում է ճգնաժամային վիճակում և որի համար անհրաժեշտ են մի քանի պայմաններ՝ շտկողական, զարգացնող, ուսուցանող:

**<u>Անհատական հոգեբանական խորհրդատվություն ծնողների, ընտանիքի անդամների հետ:</u>**
Անհատական հոգեբանական խորհրդատվություն իրականացվել է **16** ընտանիքի անդամի հետ, որից **14 մայր**, **2 տատիկ:**
Աշխատանքի ընթացքում տրվել է հոգեբանական աջակցություն, խորհրդատվություն: Ծնողներին ցուցվել է հոգեբանի հետ զուգահեռ ցուցաբերել հետևողականություն երեխաների շտկման ուղղությամբ, հարգալից վերաբերմունք, սեր ու գուրգուրանք տալ երեխաներին:
Ընտանիքի անդամների հետ աշխատանքը տարվել է **անհաշտության** ուղղված, որը լուրջ խնդիր էր և երեխաների և ծնողների համար: Աշխատանքը ունեցել է դրական արդյունք, ըստ որի ընտանիքը ապրում է մեկ հարկի տակ:

<u>ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԱՇԽԱՏԱՆՔ:</u> խորհրդատվություն իրականացվել է **8** երեխայի հետ, **որից 6 տղա, 2 աղջիկ** և **7 ծնող:**

- ➢ *Կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Ղարաղյանը և հոգեբան Ա. Հակոբյանը* հայիր խորհրդատվություն են իրականացրել **5** երեխայի/ տղա/ և **4** ծնողի հետ:

- ➢ *Կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը և հոգեբան Ա. Հակոբյանը* հայիր խորհրդատվություն են իրականացրել թվով 3 շահառուի հետ, որից **1** տղա, **2** աղջիկ/ և 3 ծնող/մայր:

<u>ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԹԻՐԱԽ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ</u>

<u>1. Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման խումբ:</u> Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի սոցիալական աշխատողները և հոգեբանը կազմել են **3** թիրախ խումբ, որի շրջանակներում իրականացրել են կյանքի հիմնարար հմտությունների զարգացմանը ուղղված խմբային աշխատանքներ:
Թիրախ խմբերում ընդհանուր ներգրավված է եղել ընդհանուր թվով **34** երեխա, որից **17** աղջիկ, 17տղա:

- <u>Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խումբ 1-ը վարել է կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Ղարաղյանը:</u>

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **6** հանդիպում թիրախ խմբում, որին մասնակցել է **16** երեխա, որից **7** աղջիկ, **9** տղա:
Թիրախ խմբում անդրադարձ է եղել հետևյալ թեմաներին.
- Ծանոթացում, խմբային կանոններին, դասընթացի թեմաների ներկայացում
- Կոնֆլիկտների կառավարում՝ 2 հանդիպումով
- Որոշումների կայացում՝ 1 հանդիպում
- Ֆինանսական գրագիտություն
- Թեմաների ամփոփում

Աշխատանքները նպաստել են շահառու երեխաների սոցիալական հմտությունների զարգացմանը:
1-ին հանդիպման ընթացքում տեղի է ունեցել ծանոթացում, խմբային կանոնների մշակում, թիրախ խմբի թեմաների ներկայացում:
2-րդ հանդիպումը <<Որոշումների կայացում>> թեմային էր նվիրված: Հանդիպումը մեկնարկել է փոքրիկ վարժանքով, որի շնորհիվ երեխաները գիտակցել են, որ որոշումների կայացումը անընդհատ գործընթաց է, և ամեն պահ մարդը տարբեր կարևորության որոշումներ է կայացնում: Այնուհետև երեխաներին ներկայացվել է որոշումներ կայացնելու մտավոր, սոցիալական և հուզական ասպեկտները, ինչպես նաև որոշումների կայացման PAUSE մեթոդը:
3-րդ և 4-րդ հանդիպումները նվիրված էին <<Վեճերի/ կոնֆլիկտների հաղթահարում>> թեմային: Հանդիպումների ընթացքում անդրադարձ է եղել կոնֆլիկտի սահմանմանը, պատճառներին, դրական և բացասական կողմերին, տեսակներին, առանձնացվել է կոնֆլիկտի 3 կառուցվածքային տարրերը՝
- Կոնֆլիկտի օբյեկտը
- Կոնֆլիկտի մասնակիցները
- Միջադեպը

Անդրադարձ է եղել կոնֆլիկտի 5 անհատական ոճերին՝ մրցակցություն, համագործակցություն, փոխզիջում, հարմարում, խուսափում, բանակցություններին:
Հանդիպումների ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝
- Մուլտֆիլմի դիտում
- Թեստի լրացում

- Սահիկաշարի դիտում
- Նկարի վերլուծություն
- Մտագրոհ
- Խմբային վարժանքներ և քննարկում

5-րդ հանդիպումը նվիրված էր ֆինանսական գրագիտությանը: Դասընթացի ընթացքում երեխաները ծանոթացել են այնպիսի հասկացությունների ինչպիսիք են՝ արժույթ, ծախս, եկամուտ, խնայողություն, բյուջեի արդյունավետ կառավարում:
Կիրառվել են հետևյալ մեթոդները և վարժանքները՝

- Սահիկաշարի դիտում
- Խմբային քննարկում
- Սեղանի խաղ՝ ֆինանսական լոտո
- Բյուջեի պլանավորում վարժանք

Արդյունքում երեխաները հասկացել են իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար, թե որքան կարևոր է առաջնահերթություններ սահմանելը և ֆինանսական միջոցները խնայելը:

- <u>Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ թիրախ խումբ 2-ը վարել է կենտրոնի սոցիալական աշխատող Ն. Գևորգյանը:</u>

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է թիրախ խումբ, որին մասնակցել են թվով 9 շահառու, որից 5 աղջիկ, 4 տղա: Խմբային աշխատանքները իրականացվել են հետևյալ թեմաներով՝

- Հաղորդակցման հմտություններ
- Ինքնաճանաչում
- Ժամանակի կառավարում

Հաղորդակցման թեմային մասնակցել են թվով 8 շահառու երեխաներ, որից 5 տղա, 3 աղջիկ: Հանդիպման ընթացքում քննարկվել է հաղորդակցաման ընդանուր նկարագիրը, ներկայացվել է տեսակները՝ վերբալ և ոչ վերբալ, քննարկվել է ոչ վերբալի տեսակները՝ ձայնային, շփական, տեսողական: Ներկայացվել է արդյունավետ հաղորդակցման կանոները և հաղորդակցման ժամանակ հաճախակի հանդիպող խոչընդոտները:
Ընթացքում կիրառվել են խաղ-վարժանքներ, որոնք նպաստել են թեմայի ամրապնդմանը:
Երկրորդ խմբային աշխատանքը ուղղված էր ժամանակի կառավարմանը, որին մասնակցել են թվով 7 շահառու, որից 5 աղջիկ, 2 տղա: Հանդիպման ընթացքում ներկայացվել է ժամանակի կառավարման սահմանումը, քննարկվել է ժամանակի կառավարման 6 գլխավոր խորհուրդները, որը ներառում է

- Նախնական գրաֆիկի կազմում
- Վաղ արթնանալ
- Սահմանել առաջնահերթություններ
- Սովորել ասել ոչ
- Արդյունավետ օգտագործել ամեն րոպե
- Աշխատել ավելի արդյունավետ, որ թե ավելի շատ

Երրորդ հանդիպման թեման Ինքնաճանաչումն էր, որի ընթացքում իրականացվել է խմբային վարժանք: Երեխաները գունավոր թղթերից պատրաստել են մարդուկ և մարդուկի վրա գրել իրենց բնորոշող բնավորության գծերը և հատկանիշները: Աշխատանքի ավարտին երեխաները մարդուկին ներկայացնելու միջոցով, ներկայացրել են իրենց անհատական առանձնահատկությունները: Աշխատանքը նպաստել է մասնակիցների ինքնաճանաչմանը և ինքնաբացահայտմանը:

Չորրորդ հանդիպման ընթացքում ամփոփվել են 3 թեմաները և իրականացվել է "Իմ եռանկյունի գլխարկը" խաղ վարժանքը՝ ամրապնդելով մասնակիցների ոչ խոսքային հաղորդակցման հմտությունները:

- <u>Կյանքի հիմնարար հմտությունների զարգացման թիրախ խումբ 3 -ը վարել է կենտրոնի հոգեբան Ա. Հակոբյանը:</u>

Թիրախ խմբին մասնակցել է **10** երեխա: Ընդհանուր առմամբ իրականացվել է **6** հանդիպում հետևյալ թեմաներով.

- Ճկունություն
- Դիմակայունություն
- Ստեղծագործական մտածողություն

Հետևյալ թեմայով իրականացվել է 2 հանդիպում: Անդրադարձ է եղել ստեղծագործական մտածողության կարևորությանը, տեսակներին: Իրականացվել են խմբային վարժանքներ, որոնք նպատակ ունեին զարգացնել երեխաների ստեղծագործական մտածողությունը:

**<u>2. Արտթերապիայի</u>** խումբը իրականացվել է կենտրոնի հոգեբանի կողմից: Իրականացվել է արտթերապիայի 2 խումբ: Խմբերում ներառվել է **25** երեխա, որից **17** տղա, **8** աղջիկ:
Արտթերապիայի խումբը նպաստել է երեխաների հուզական կայունությանը, **հասակակիցների** հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը:
Աշխատանքի ընթացքում վեր է հանվել ուժեղ և թույլ կողմերը և այլն:
Իրականացվել են հետևյալ թերապիաները՝

- Ավազաթերապիա
- Նկարչաթերապիա
- Հեքիաթաթերապիա
- Պլաստիլինով ծեփ

Ըստ հոգեբանի դիտարկման թերապիայի միջոցով երեխաները կարողացել են ստեղծագործել, աշխատել և զգալ իրավիճակները, նրանք կարողանում են ազատ արտահայտվել:
Թերապիան ազդում է երեխաների հոգեվիճակի վրա, նրանք կարողանում են կողմնորոշվել տարածության մեջ, պակասում է ագրեսիվ և նյարդային դրսևորումները, հուզական լարվածությունը, վախերը, ֆոբիաները, օգտագործում են իրենց մեջ կուտակած էներգիան:

**3. <u>Առաջնորդների խումբ</u>:**
Խումբը իրականացվում է կենտրոնի սոցիալական աշխատողի **կողմից**: Կան **թեմաներ, որոնք խմբի հետ իրականացվում է** բազմամասնագիտական թիմի այլ մասնագետի կողմից:
Խմբի նպատակն է երեխաներին փոխանցել առոջնորդական հմտություններ, որոնք կկիրառվեն գործնականում:
Հաշվետու **ժամանակահատվածում** Առաջնորդների խումբը կազմված է **9** անդամներից, որից **7** աղջիկ, **2** տղա: Հաշվետու ժամանակահատվածում առաջնորդկան խմբի հետ իրականացվել է խմբային աշխատանքներ հետևյալ թեմաներով՝

- Հաղորդակցաման հմտություններ
- Առաջնորդություն
- Միջոցառումների կազմակերպում, փուլերը
- Թիմային աշխատանք

1-ին թեման ուղղված էր հաղորդակցման հմտությունների զարգացմանը, որին մասնակցել են թվով **9 շահառուներ 7 աղջիկ**, **2 տղա**: Հանդիպման ընթացքում շահառուներին ներկայացվեց, թե ինչ նշանակություն ունի Հաղորդակցում բառը: Ներկայացվեց

սահմանումը, քննարկեց հաղորդակցման տեսակները, գործառույթները, արդյունավետ հաղորդակցման կանոնները, ավելի մանրամասն խոսվեց խաղորդակցման խոչընդոտներից՝

- Կոմպլեքսներ
- Բառապաշար
- Ընկալման խոչընդոտ
- Գեղագիտական խոչընդոտ
- Դիրքորոշման խոչընդոտ
- Արտահայտման խոչընդոտ
- Հուզական խոչընդոտ
- Սեռատարիքային խոչընդոտ

Հանդիպման ընթացքում կիրառվել են խաղ-վարժանքներ:
Հանդիպումը նպաստեց շահառուների մոտ հաղորդակցման հմտություններ. տեսակերի, գործառույթների իմացմանը և կիրառմանը:

2-րդ հանդիպման թեման էր <<Առաջնորդությունը>>, որին ներկա էին **6 մասնակից**, որից **5 աղջիկ, 1 տղա**: Հանդիպման ընթացքում ներկայացվեց առաջնորդության սահմանումը, քննարկվեց առաջնորդական հմտությունները: «Մարդուկը» մեթոդի օգնությամբ երեխաներին ներկայացվեց թե առաջնորդությունը խմբում ինչպիսի գործառույթներ է իրականացնում: Գործառույթները հետևյալն են՝

- Տեղեկատվական/ գլուխ
- Հուզական /սիրտ
- Գործնական /ձեռքեր

Հանդիպման ընթացքում շահառուները իմացան խմբում աշխատելու ընթացքում ըստ գործառույթների ում որ հարցով կարող են դիմել:

3-րդ հանդիպման թեման էր միջոցառումների կազմակերպում: Հանդիպումը իրականացվել է կենտրոնի համակարգողի կողմից: Հանդիպման արդյունքում մասնակիցները գիտելիքներ են ձեռք բերել միջոցառման գաղափարի մշակման կարևորության, օրակարգի կազմման և գործողությունների ճիշտ բաշխման, ռեսուրսների /մարդկային, նյութական և ֆինանսական/ կառավարման, միջոցառման հանրայնացման վերաբերյալ:
Մշակվել է յուրաքանչյուր առաջնորդի միջոցառման սցենարը, օրակարգը, անհաժեշտ պարագաների ցանկը: Մասնակիցներին ներկայացվել է, որ յուրաքանչյուր միջոցառում կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր ռեսուրսները, ֆորս-մաժորային իրավիճակները և ունենալ էմպացիայի զգացողություն:
Հանդիպմանը մասնակցել է **8** մասնակից՝ **7** աղջիկ, **1** տղա:

4-րդ հանդիպման ընթացքում քննարկվեց Թիմային աշխատանք թեման, որին ներկա էին **8** շահառուներ՝ **7** աղջիկ, **1** տղա: Հանդիպման ընթացքում շահառուներին ներկայացվեց խմբային աշխատաքի կարևորությունը համատեղ աշխատանքներ իրականացնելու ընթացքում:
Քննարկվեց արդյունավետ թիմային աշխատանքի առանձնահատկությունները:
Իրականացվեց խմբի SWOT վերլուծություն, որտեղ շահառուները թիմային աշխատանքի միջոցով ներկայացրեցին խմբի ուժեղ, թույլ կողմերը, առկա հնարավորությունները և ներկայայացրեցին թե ինչպիսի ռիսկերի կարող են հանդիպել համատեղ աշխատելիս:
Հանդիպումը նպաստեց շահառուների թիմում աշխատելու կարողության զարգացմանը:

_Առաջնորդների խմբի անդամները կենտրոնում հմտություններ են ձեռք բերել ինչպես կազմակերպել միջոցառում՝ մշակելով գաղափար, օրակարգ, կատարելով՝ ռեսուրսների բաշխում, թիմային աշխատանք: Խումբը նպաստում է երեխաների հաղորդակցման,_

*բանակցային, ճկունության, ստեղծագործական և քննադատական մտածողության, առաջնորդական և թիմային աշխատանքի հմտությունների զարգացմանը:*
*Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածի մարտ ամսվա վերջին շաբաթվա ընթացքում առաջնորդական խմբի անդամները իրենց հասակակիցների համար իրականացրեցին միջոցառումներ, որոնք նկարագրված են սույն հաշվետվության 7-րդ կետում:*

**4. Էթիկա և առողջ սովորույթներ:** Խումբը իրականացվել է սոցիալական աշխատողի կողմից: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **4** հանդիպում: Ընդհանուր առմամբ խմբին մասնակցել է **17** երեխա , որից **14** տղա, **3** աղջիկ:
Հանդիպումները իրականացվել են հետևյալ թեմաների շուրջ.

- Ծանոթացում, խմբային կանոնների ներկայացում և քննարկվելիք թեմաների համառոտ ներկայացում
- Էթիկայի կանոնները և դրանց կարևորությունը
- Մուլտֆիլմի դիտում- քննարկում էթիկայի կանոնների վերաբերյալ

Հանդիպման ընթացքում հատկապես անդրադարձ է եղել էթիկայի կանոններին հետևյալ ոլորտներում՝ թատրոնում, տրանսպորտում, հյուր գնալիս, հյուր ընդունելիս, հեռախոսային խոսակցությունների ընթացքում, փողոցում և այլն: Իրականացվել է նաև "թատրոնում" խաղ-վարժանքը:

- Էթիկայի կանոնները հասակակիցների հետ միջանձնային փոխհարաբերությունների համատեքստում. ընկերության կանոնները:

Հանդիպման ընթացքում իրականացվել է թեմատիկ մուլտֆիլմի դիտում-քննարկում: Խմբային քննարկման միջոցով դուրս է բերվել, թե ինչու է կարևոր ընկերներ ունենալը, և թե ինչ կանոնների պետք է հետևել շատ ընկերներ ունենալու, և ընկերությունը պահպանելու համար: Աշխատանքի ավարտին երեխաները նկարել են նկար, որտեղ արտացոլել են դասընթացից ստացված գիտելիքները, տպավորությունները և զգացողությունները:

**5. Թեմատիկ իրազեկիչ և տեղեկատվական հանդիպումների շարք կենտրոնի շահառու երեխաների շրջանում:** Կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից պլանավորվել է յուրաքանչյուր հաշվետու եռամսյակում կենտրոնի բոլոր երեխաների համար կազմակերպել թեմատիկ դասընթացների շարք՝ ներգրավելով կենտրոնի մասնագետներին և այլ ոլորտային մասնագետների:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ թեմաները.

➢ Հիգիենա և առողջ ապրելակերպ: Ս/թ հունվարի 10-18-ը ընկած ժամանակահատվածում կենտրոնի հոգեբան Ա. Հակոբյանը իրականացրել է հանդիպումների շարք <<Հիգիենա և առողջ ապրելակերպ>> թեմայով: Հանդիպումներին ընդհանուր առմամբ մասնակցել է **55** շահառու երեխա, որից **22**աղջիկ, **33** տղա: Ներկայացվել է հետևյալ թեմաները.
  - Մարմնի հիգիենա
  - Հագուստի հիգիենա
  - Մազերի հիգիենա
  - Աչքի հիգիենա
  - Ատամների հիգիենա
  - Ձեռքերի, եղունգների հիգիենա
  - Ոտքերի հիգիենա և այլն
  - Առողջ ապրելակերպ վարելու բաղադրիչները՝ ուտել առողջ սնունդ, խմել հեղուկներ, մարզվել, մաքուր օդ շնչել, ժամանակին քնել:

*Դասընթացների շարքը հնարավորություն տվեց մասնակիցներին հարստացնել գիտելիքները թեմայի շուրջ: Երեխաները գիտակցեցին անձնական հիգիենայի կանոնների*

*պահպանման և առողջ ապրելակերպ վարելու կարևորությունը և դրա կապը մարդու առողջության պահպանման հետ:*

- <u>Շրջակա միջավայրի պահպանություն:</u> Մ/թ մարտի 10-14-ը ընկած ժամանակահատվածում կենտրոնի մասնագիտական թիմը ընդհանուր թվով **57** սաների համար, որից **36** տղա, **21** աղջիկ իրականացրել է <<Շրջակա միջավայրի պահպանություն: Մենք ու մեր մոլորակը>> թեմատիկ դասընթացների շարք՝ ներառելով հետևյալ ենթաթեմաները՝
    - **Բույսերի խնամքը և նշանակությունը:** Հանդիպմանը մասնակցել է **14** երեխա, որից **5 աղջիկ, 9 տղա:** Հանդիպումը իրականցրել է կենտրոնի հոգեբանը: Հանդիպման ընթացքում ներկայացվել է բույսերի կառուցվածքը, և խնամքի առանձնահատկությունները, ինչպես նաև, թե ինչ նշանակություն ունեն բույսերը մարդկանց կյանքում: Աշխատանքները նպաստել են այն բանի գիտակցմանը, թե որքան կարևոր է խնամքով վերաբերվել բուսական աշխարհին, քանի որ վերջիններս կարևոր դեր ունեն մեր շրջակա միջավայրի պահպանման հարցում:
    - **Անտառների պահպանություն:** Հանդիպմանը ներկայացվել է անտառների դերն ու նշանակությունը շրջակա միջավայրի վրա, անապատացման հիմնախնդիրը: Դասընթացին մասնակցել է **11 երեխա տղա:** Հանդիպումը իրականցրել է կենտրոնի լոգոպեդը, ով ունի նաև բնապահպանական կրթություն:
    - **Ջուր:** Թեման իրականացվել է կենտրոնի համակարգողի կողմից: Դասընթացին մասնակցել է **21 երեխա, որից 12 տղա, 9 աղջիկ:** Դասընթացի ընթացքում ներկայացվել է երկրագնդի վրա կյանքի կազմավորման ու զարգացման երաշխիքը ներկայացնող ջրի մասին, առանց որի կյանքն անհնար է: Քննարկում է ծավալվել ջրի պաշարների, ջրային ռեսուրսների կարևորության, խնայողության և պաշտպանության վերաբերյալ: Ներկայացվել է աշխարհի տարբեր երկրների և Հայաստանի ջրային պաշարները: Թեմատիկ տեսանյութերի դիտում-քննարկումը առավել վիզուալ է դարձրել թեմայի արդիականությունը: Ներկայցվել է նաև թափոնների վերամշակման և աղբի տեսակավորման նշանակությունը:
    - **Բնապահպանական հիմնախնդիրներ. Օզոնի շերտի պահպանությունը:** Հանդիպումը իրականցրել է կենտրոնի սոցիալական աշխատող Տ. Դաբաղյանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել, թե ինչ է բնապահպանությունը, ինչպիսի շղթայական փոխկապվածության մեջ են գտնվում մեր շրջակա միջավայրի տարրերը և բաղադրիչները: Մեր օրերում ինչպիսի բնապահպանական հիմնախնդիրներ են առկա, ինչու են վերջիններս գլոբալ ռիսկ հանդիսանում, որքանով են դրանք արդիական: Մասնավորապես անդրադարձ է եղել թափոնների աճին և դրանց կառավարման հիմնախնդրին, վերականգնվող և չվերականգնվող բնական ռեսուրսների խնդրին, հողերի դեգրադացիային, օզոնի շերտի վնասմանը և այլն: Տեղի է ունեցել մուլտֆիլմի դիտում-քննարկում օզոնի շերտի վերաբերյալ, ինչը նպաստել է թեմայի ավելի լավ յուրացմանը: Հանդիպմանը մասնակցել է **11 երեխա, որից 7աղջիկ, 4 տղա:**

- <u>Կիբեռանվտանգության:</u> Մ/թ մարտի 17-ին, Գավառի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնում անցկացվեցին տեղեկատվական հանդիպում Կիբեռանվտանգության և կիբեռհիգիենայի թեմաներով, որին մասնակցեց **22** երեխա, որից **11** աղջիկ, **11** տղա: «CyberNinja Camp»-ն իրականացվում է «Կիբեռանվտանգության ուսուցման ծրագրի» շրջանակում, որն անցկացվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի (UNICEF Armenia - Յունիսեֆ Հայաստան) և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) (Enterprise Incubator Foundation (EIF)) կողմից՝ ՁԻՀ-ի Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների

(VTC - Vanadzor Technology Center by EIF) ու «ՍայՀաբ Հայաստան»-ի (CyHub Armenia - EIF Cybersecurity Initiative) միջոցով՝ Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում (Sisian Co-creation Lab by EIF), 12-ից 18 տարեկան մարզաբնակ երիտասարդների ներգրավմամբ:

<u>ԼՈԳՈՊԵԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</u> (խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ)

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են համապատասխան աշխատանքներ լոգոպեդական աջակցության կարիք ունեցող երեխաների աջակցությունը արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ: Ուսումնասիրվել են երեխաների անամնեստիկ տվյալները, բացահայտվել են խոսքային խանգարումները: Յուրաքանչյուր երեխայի համար մշակվել է հեռանկարային զարգացնող պլան: Երեխայի կարիքին համապատասխան անցկացվել են անհատական պարապմունքներ, կիրառելով տարբեր մեթոդներ:

Լոգոպեդական աշխատանքի ընթացքում **13 երեխայի, որից 11 տղա 2 աղջիկ,** հետ աշխատելիս կիրառվել են հետևյալ 3 մեթոդները:
- Գործնական մեթոդներ՝ վարժություններ, խաղեր, հաղորդակցման իրավիճակների մոդելավորում
- Զննական մեթոդներ՝ դիդակտիկ նյութեր, դիտում, ունկնդրում
- Բառային մեթոդների՝ խոսքային նյութեր, պատմվածքներ, զրույց, ընթերցանություն

Մասնագետի կողմից կազմվել և լրացվել են հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝
- Խոսքի հետազոտման քարտ
- Լոգոպեդի առաջնային գնահատման թերթիկ ձևաթուղթ
- Հաղորդակցման մատրիցա

**<u>Լոգոպեդի կողմից իրականացվող անհատական աշխատանք/խորհրդատվություն երեխաների հետ:</u>** Համագործակցելով կենտրոնի մասնագիտական թիմի հետ կազմվել է աշխատանքային գրաֆիկ: Կատարվել են դիտարկումներ, բացահայտվել են երեխաների մոտ առկա խոսքային խանգարումները և աշխատանքներ են իրականացվել դրանց շտկման ուղղությամբ:
Դիտարկումների արդյունքում բացահայտվել է լոգոպեդական միջամտության կարիք ունեցող **13 երեխա, որից 11 տղա, 2 աղջիկ:** Կատարվել է խոսքային հետազոտություն, խնդրի բացահայտում, և ստացել են կարիքին համապատասխան լոգոպեդական աջակցություն, ըստ անհատական պարապմունքների գրաֆիկի: Լոգոպեդի կողմից իրականացվել է շահառուի առաջնային կարիքի գնահատում և ըստ խոսքի ձևավորման ախտահարման աստիճանի աշխատանք է իրականցվել շահառուների հետ, ովքեր ունեն հետևյալ խնդիրը.
- **2 երեխա (1 տղա, 1 աղջիկ)** ունեն ԽԸԹ-ի I մակարդակ, նրաց մոտ առկա է խոսքային հաղորդակցման միջոցների բացակայություն, կիրառում են հաղորդակցման հարալեզվական ձևեր, արտաբերում են առանձին հնչյուններ, առկա են որոշ թոթովանքային և ճիշտ արտաբերվող բառեր:
- **8 երեխայի (8տղա)** հետ, ովքեր ունեն ԽԸԹ-ի III մակարդակ: Երեխաները կիրառում են ընդարձակ նախադասություններ, թույլ են տալիս ձևաբանական և շարահյուսական սխալներ, վերջինիս բառերի վանկային կառուցվածքը խանգարված է կամ խանգարված չէ:
- **2 երեխա (1տղա 1 աղջիկ),** ովքեր ունեն ԽԸԹ-ի IV մակարդակ: Երեխաները ունեն ոչ խիստ արտահայտված ԽԸԹ, դժվարանում են կրկնել բարդ վանկային կառուցվածք ունեցող բառերը, ունեն բառափոխության և բառակազմության դժվարություններ, պատմելիս դժվարանում են պահպանել իրադարձությունների տրամաբանական հաջորդականությունը:

- **1 երեխայի մոտ (1 տղա)** մատ առկա է ՀԹ, ր, ռ, ս,շ , չ-ջ ճ հնչյունի շտկում: Հնչյունային թերզարգացում (ՀԹ)-ը առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի խանգարում, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ:

Հնչյունային թերզարգացումն անվանում են նաև «կոսմետիկական» թերություն, քանի որ այս դեպքում հնչարտաբերման թերությունները չեն ազդում խոսքային լսողության, բառապաշարի, խոսքի քերականական կառուցվածքի, ընթերցանության և գրի վրա: Հնչյունների կամ հնչյունախմբերի արտաբերման խանգարում է, որը դրսևորվում է հնչյունների արտաբերման աղավաղմամբ կամ բացակայությամբ:

Հնչյունների սխալ արտաբերման շտկումն իրականացվել է հետևյալ փուլերով.

- Նախապատրաստական հնչյունի դրում
- Դրված հնչյունի ամրապնդում
- Դրված հնչյունի տարբերակում այլ հնչյուններից

Հնչարտասանության ամրապնդումն իրականացվել է դիդակտիկ խաղերի և վարժությունների միջոցով: Ուսումնասիրվել են երեխաների կարողությունների և հմտությունների զարգացման շարժընթացը: Ճահառունների շրջանում խոսքի բառաքերականական կառուցվածքի շտկում կատարվել է հետևյալ ուղղություններով.

- Բառապաշարի հարստացում
- Քերականական սխալների շտկում
- Կապակցված խոսքի զարգացում/ պատմել նկարը. պարզ սյուժե/
- Կազմել պատմություն՝ ըստ նկարների շարքի
- Վերապատմել տեքստը
- Պատմել ինքնուրույն
- Ցուրահատուկ դրսևորումներ խոսքում, Էխոլալիայի շտկում
- Խոսքի համապատասխանեցում գործողություններին
- Կարդալու և գրելու հմտությունների զարգացում
- Խոսքի բառաքերականական կառուցվածքը շտկելու նպատակով իրականացվում է հարց ու պատասխան, խաղերի, զրույցի, նկար-քարտերի միջոցով

__Լոգոպեդի կողմից խորհրդատվություն երեխաների ծնողների հետ:__ Ծնողների հետ անցկացվել են խորհրդատվական զրույցներ, տեղեկացվել են երեխայի կարիքների և զագացման առանձնահատկություններին վերեբերվող մոտեցումների մասին,ներկայացվել է աշխատանքի բնույթն ու աջակցության ձևերը:

__Խոսքի զարգացման թիրախ խումբ:__ Լոգոպեդի կողմից իրականացված խմբային աշխատանք երեխաների հետ՝ ուղղված խոսքի զարգացմանը: Կենտրոնի լոգոպեդը աշխատել է 1 խմբի հետ: Խմբում երեխաների հետ աշխատանք է իրականցվել ուղղված խոսքի ընդհանուր զարգացմանը: Խոսքի զարգացման խմբի հիմնական նպատակն է զարգացնել երեխաների բանավոր և գրավոր խոսքը, բարելավվել երեխաների հաղորդակցման հմտությունները: Խումբը բաղկացած է եղել **9** երեխայից, որից **8** տղա, **1** աղջիկ: Խմբի հետ իրականացվել է **5** խմբային հանդիպումներ հետրյալ թեմաներով՝

- Ծանոթացում
- Խմբային կանոնների որոշում
- Բանավոր խոսքի զարգացում
- Գրավոր խոսքի զատգացում
- Բառապաշարի հարստացում հարստացման շրջանակներում բառի նպատակային կիրառման կարողության զարգացմանը, բառի փոխաբերական իմաստի, բառի բազմիմաստության ընկալման ձևավորմանը:

ԽԸԹ-ի այս մակարդակում աշխատանք է տարվում կապակցված խոսքի զարգացման

- Երկխոսության խթանում
- Սյուժետային նկարով պատմվածքի կազմում
- Սյուժետային նկարների շարքի պատմում
- Տեքստի վերապատմում
- Ստեղծագործաբար պատմվածքի կազմում

*Խմբային աշխատանքների արդյունքում նկատելի է դարձել երեխաների հաղորդակցման հմտություններ բարելավումը, կապակցված խոսքի զարգացումը, գրավոր խոսքի զարգացումը, ստեղծագործաբար պատմվածքի կազմումը:*

**Խմբավարի ծառայություն:**

- **Պարի խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում, Պարի խմբին մասնակցել է **10** երեխա (աղջիկ): Դասընթացները տեղի են ունենում պարային ստուդիայում շաբաթական երկու օր հաճախականությամբ: Յուրաքանչյուր դասընթաց սկսվել է նախավարժանքով, մարմնի պլաստիկ վարժանքներով: Երեխաները սովորել են պարային նոր շարժումներ: Խմբի մասնակից երեխաները եռամսյա ժամանակահատվածում սովորել են տարբեր ժանրերի պարային շարժումներ, ծանոթացել են մարմնի մասերի մկաններին և մարզվել են: Մասնակիցները ուսանել են տարբեր պարեր՝ Յարխուշտա, ժողովրդական պարեր, հայկական բեմական պարեր, պար Չարլստոն: Կանանց միջազգային տոնին կազմակերպված միջոցառմանը պարի խմբի **3** սաները հանդես են եկել հայկական պարային կատարմամբ:

- **Խոհարարության խումբ:** Հաշվետու ժամանակահատվածում, Խոհարարության խմբին մասնակցել է **6** երեխա (4 աղջիկ, 2 տղա): Խումբը իրականացվել է կենտրոնի խոհարարի կողմից, շաբաթական 1 օր հաճախականությամբ: Եռամսյա ժամանակահատվածում խմբի մասնակիցները պատրաստել են հետևյալ ուտեստները՝
  - Աղցան գազարով և կաղամբով
  - Աղցան եգիպտացորենով
  - Աղցան մայրաքաղաքային
  - Աղցան վինեգրետ
  - Լոբով ռուլետ
  - Պիցցա
  - Թխվածքաբլիթ

**3. Կազմակերպության կողմից՝ ծառայություններ ստացած ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների առնվազն 90%-ի բավարարվածություն մատուցված ծառայություններից:**
Կենտրոնում գործում է կարծիքների արտահայտման և բողոքարկման արկղ, որը հնարավորություն է ընձեռում շահառուներին անանուն և ազատ արտահայտել իրենց կարծիքը մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

**4. Յուրաքանչյուր ամիս ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ և նրանց ընտանիքներ՝ նվազագույնը տվյալ լոտում նշված շահառուների թվով:**
Հաշվետու ժամանակահատվածում Գավառ <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **66** երեխայի հետ:

- *Հունվար*- **65 երեխա/ 28 աղջիկ, 37տղա**
- *Փետրվար*- **65 երեխա 28աղջիկ, 37տղա**
- *Մարտ*- **64 երեխա 28 աղջիկ, 36 տղա**

Երեխաների տարիքային և սեռային բաժանում՝

- 0-6 տ.- **2 երեխա՝ 1 աղջիկ, 1 տղա**
- 7-14 տ.- **56 երեխա՝ 35 տղա, 21 աղջիկ**
- 15-18 տ.- **8 երեխա՝ 6 աղջիկ 2 տղա**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտված շահառուների քանակական տվյալները հետևյալն են՝

- Սոցիալական ծառայություն - **66 երեխա (որից 28 աղջիկ, 38 տղա), 56 ընտանիքի անդամ (որից 46 մայր, 6 հայր, 2 տատիկ, 1քեռի, 1 պապիկ)**
- Սոցիալ-հոգեբանական համալիր ծառայություն- **8 երեխա (որից 6 տղա,2 աղջիկ), 7 ծնող)**
- Հոգեբանական ծառայություն–**66 երեխա (որից աղջիկ, 38 տղա), 14մայր 2 տատիկ**
- Լոգոպեդի ծառայություն **-13 երեխա, 11 տղա 2 աղջիկ**
- Տաք սնունդ- **66 երեխա, որից 28 աղջիկ, 38 տղա**
- Անձնական ուղեկցողի ծառայություն- **3 երեխա, որից 1 աղջիկ, 2 տղա**
- Խմբավարի ծառայություն- **16, որից**

**Պարի խումբ- 10 երեխա/աղջիկ/ և Խոհարարության խումբ- 6 երեխա /4 աղջիկ, 2 տղա/**

**5. Արտակենտրոն ծառայություններ ստացած ՀԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների թիվ:**

Հաշվետու ժամանակահատվածում արտակենտրոն ծառայություններ չեն մատուցվել:

**6. Երեխաների կրթական իրավունքի իրացման համար ստեղծված պայմաններ (արդյունքը չի հետապնդում դասապատրաստում, այլ սոցիալական մանկավարժի կողմից՝ կրթությունից դուրս մնացած երեխաների՝ կրթական համակարգում ընդգրկվածության հարցինաջակցություն):**

<u>Խորհրդատվություն</u>: 2024թ. հոկտեմբերի 1-ից իրականացվել է կենտրոնի շահառու Յ.Տ- ի կարիքների վերագնահատում, որի արդյունքում դուրս է բերվել, որ շահառուն ունի ուսումնական դժվարություններ և այդ պատճառով հոգեբանի հետ համատեղ իրականացվել են դպրոցայցեր, որի ընթացքում ուսուցչուհու հետ քննարկվել է Յ.Տ-ի ներառման համակարգում ընդունվելու վերաբերյալ հարցը, ով դեմ էր երեխային ներառական գործընթացում ընդգրկվելուն և պնդում էր, որ այդ գործընթացը պետք է իրականացվի ծնողի կողմից:
Կենտրոնում տարված սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվությունների ընթացքում բարելավել է ծնողի գիտակցական մակարդակը երեխայի խնդիրների վերաբերյալ և ծնողը դպրոցում դիմում է լրացրել երեխայի գնահատման վերաբերյալ:
2025թ. հունվարին, ՏՄԱԿ -ի կողմից իրականացվել է դիտարկում, որի արդյունքում դուրս է բերվելու երեխայի ուսումնական դժվարությունները:
13.01.2025-11.02.2025թ.-ին իրականացված դիտակման նախնական արդյունքում Յ.Տ-ին Գեղարքունիքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի N12 հրամանով ձևավորված գնահատման մասնագետների խումբն արձանագրել է հետևյալ տեղեկատվությունը և արել է հետևյալ առաջարկությունները.
*Երեխան ունի ինտելեկտի /մտավոր/ խնդիրներով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սովորողին կրմադրվող կրթության*

*կազմակերպման մանկավարժահոգեբանական ծառայությունների 2-րդ աստիճանի աջակցության կարիք:*

**7. Համայնքային մշակությանին կյանքին ԿԴԻՀ երեխաների ընդգրկվածության ապահովում:**

Հաշվետու ժամանակահատվածում, Գավառի <<Փոքրիկ Իշխան>> կենտրոնի երեխաներից կազմված Առաջնորդների խմբի մասնակիցները հանդես եկան սեփական նախաձեռնություններով և իրենց հասակակիցների համար կազմակերպեցին հետևյալ միջոցառումները՝

- Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ Իշխան» ստեղծագործության մասին տեղեկատվական ներկայացում և թեմատիկ խաղ-վիկտորինա, որի միջոցով ամփոփվեցին երեխաների գիտելիքները ստեղծագործության վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցել է **14 երեխա, որից 8 աղջիկ, 6 տղա**: Վիկտորինայի արդյունքում հաղթող կողմի երեխաները ստացել են խրախուսական նվերներ: Միջոցառումը ամփոփվեց տոնական հյուրասիրությամբ:
- «Հույզեր և միմիկաներ» թեմայով ինտերակտիվ խաղ-վարժանք: Ներկայացվել է հույզերի և միմիկաների տեսակները խաղի, մուլտֆիլմի դիտումի միջոցով: Գիտելիքները ամփոփվել են ԳՈՒՍ մեթոդով: Միջոցառմանը մասնակցել է **18** երեխա, որից **10** աղջիկ, **8** տղա: Միջոցառումը ամփոփվեց տոնական հյուրասիրությամբ:
- «Կյանքի հիմնարար հմտություններ» թեմատիկ դասընթացների գիտելիքները ամփոփող ինտելեկտուալ խաղ՝ երեխաների կողմից կազմված խաչբառի միջոցով: Միջոցառմանը մասնակցել է **16 երեխա**, որից **9** աղջիկ, **7** տղա: Ինտելեկտուալ խաղը պատրաստվել էր երեխաների կողմից, որը կրում էր խաչբառի մեթոդը: Խաղի միջոցավ երեխաները ներկայացրեցին իրենց գիտելիքները, որոնք ձեռք են բերել Կյանքի հիմնարար հմտություններ դասընթացի շրջանակներում: Միջոցառումը ամփոփվեց տոնական հյուրասիրությամբ:
- Կինոդիտում և քննարկում: Միջոցառմանը մասնակցել է **18 երեխա**, որից **12** աղջիկ, **6** տղա: Միջոցառման մասնակիցներին Առաջնորդական խմբի երեխաները դիմավորեցին կինոսենյակում, որը իրենք էին կահավորել օգտագործելով մուգ վարագույրներ և տեխնիկական միջոցներ, պաստառներ ու հրավիրատոմս:
- Գիտափորձի իրականացում և քննարկում: Հանդիպմանը մասնակցել է **14 երեխա, որից 8 աղջիկ, 6 տղա**: Առաջնորդների խմբի երկու սաներ օգտագործելով խորհրդատվական և բժշկական նյութեր ցույց տվեցին հրաբխի ժայթքման և լավայի վերաբերյալ գիտափորձ, ինչպես նաև աղի և քաղցրահամ ջրերի տարբերությունը բացատրեցին լողացող ձվի միջոցով: Միջոցառումը ամփոփվեց տոնական հյուրասիրությամբ:
- «Հիշիր թե կարող ես» ինտելեկտուալ խաղ վարժանք: Հանդիպմանը մասնակցել է **18** երեխա, որից **8 աղջիկ, 10 տղա**: Միջոցառումը նպաստեց մասնակիցների հիշողության, ճկուն մտքի ու արագ կողմնորոշման հմտության բարձրացմանը: Միջոցառումը ամփոփվեց տոնական հյուրասիրությամբ:

**8. Շահառուների առնվազն 90% ծնողների ընդգրկվածությամբ՝ կարիքահեն դասընթացներ /ծնողավարման հմտություններ, ֆինանսական միջոցների տնօրինում և այլն/:**

**Դասընթացներ ծնողների համար:** Հաշվետու ժամանակահատվածում 14 խմբային հանդիպում է տեղի ունեցել ծրագրի շահառու ծնողների /կին/ հետ: Հանդիպումները իրկականցվել են կենտրոնի սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից:
Ընդհանուր առմամբ հանդիպմանը մասնակցել է 145 ծնող (կրկնվող թիվ):
Իրականացվել են հետևյալ թեմաներով հանդիպումներ.

- Սթրեսի կառավարում -26 մասնակից
- Հաղորդակցման հմտություններ- 26 մասնակից
- Բյուջեի կառավարում -22 մասնակից
- Ժամանակի կառավարում- 22 մասնակից
- Կոնֆլիկտի կառավարում- 26 մասնակից

**Ինքնաօգնության խմբերի հետ աշխատանք:** Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1 ինքնաօգնության խումբ:
Խմբի հետ աշխատանքը իրականացվել է կենտրոնի հոգեբանի կողմից: Խմբում ներառվել է 10 ծնող: Քննարկում է տեղի ունեցել «Ինչպիսի խնամք է անհրաժեշտ դեռահասներին, պայմանավորված սեռով» թեմայով:

**9. Ցերեկային խնամքի ծառայություններում հաշմանդամություն ունեցող երեխաների 20% ներգրավվածություն:**
Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված են եղել 19 երեխա, ովքեր ունեն հատուկ կարիքներ, ինչպիսիք են՝

- Ինտելեկտուալ հապաղում, մանկական տարիքի էմոցիոնալ, վարքային խանգարում - 1 երեխա /տղա/
- Լեզվական խնդիրներ՝ ԽԸԹ 4-րդ մակարդակ - 2 երեխա / 1աղջիկ, 1 տղա
- Լեզվական խնդիրներ՝ ԽԸԹ 3-րդ մակարդակ -4 երեխա / 3 տղա, 1 աղջիկ
- Լեզվական խնդիրներ՝ ՀԹ- 1 տղա
- Հեռատեսություն - 1 երեխա /1 տղա/
- Հիպերմետրոպիա, համագործակցվող շլություն-1 երեխա/աղջիկ/
- Անբավարար փարթամություն-1 երեխա /տղա/
- Թեթև մտավոր հետամնացություն, ԽԸԹ-3-րդ մակարդակ -1 երեխա/տղա
- Հետխոսքային զարգացման հապաղում, առաիստիկ սիմպտոմատիկա, ԽԸԹ 1-ին մակարդակ- 2 /1աղջիկ, 1 տղա/
- Հետխոսքային զարգացման հապաղում, ԽԸԹ-3-րդ մակարդակ- 1 երեխա/ տղա
- Խոսքի հապաղում, ԽԸԹ 3-րդ մակարդակ- 1 երեխա /տղա
- Միօպտիա -1 երեխա/ տղա
- Թեթև մտավոր հետամնացություն- 1 երեխա/ տղա
- Չափավոր մտավոր հետամնացություն, ուղեկցվող անբավարար ֆիզիկական զարգացում, ԽԸԹ 3-րդ մակարդակ- 1 երեխա/ տղա

**10. Ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող երեխաներ,**
**11. Ծառայություններում ընդգրկված վարքային խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար ներդրված առանձին բաղադրիչ:**
Կենտրոնի ծառայություններից օգտվող վարքային խնդիրներ ունեցող երեխաների թիվը հաշվետու ժամանակահատվածում 5 (տղա) է:
Վարքային դրսևորումներ ունեցող բոլոր երեխաները հաշվետու ժամանակահատվածում ներգրավված են եղել կենտրոնի կողմից մատուցվող բոլոր ծառայություններում:

**12. Անձնական ուղեկցողի աջակցությունից օգտվող երեխաներ**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառու 3 երեխա / 2 տղա, 1 աղջիկ/ օգտվել են անձնական ուղեկցողի ծառայությունից:
Վերջիններս ունեցել են հետևյալ խնդիրները՝
- վարքային դրսևորումներ
- հետխոսքային զարգացման հապաղում, աուտիստիկ սիմպտոմատիկա

Անձնական ուղեկցողը գնահատելով երեխայի կարիքները, ուղղորդել է վերջինիս մասնակցելու նախընտրած խմբային աշխատանքներին՝ ապահովելով նրա ակտիվ մասնակցությունը, օգտագործելով սեփական կարողությունները: Երեխայի ներառման նպատակով անձնական օգնականը ապահովել է վերջինիս մասնակցությունը համայնքում և կենտրոնում իրականացվող միջոցառումներին:

**13. Տրամադրված ծառայությունների արդյունքում ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների վիճակի մեղմում (առնվազն 60% շահառուների դեպքում) և դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարում (առնվազն 40% շահառուի դեպքում):**

Սոցիալական աջակցություն: Հայկական Կարիտասի գործընկեր Կարիտաս Սլովակիայի աջակցությամբ Գավառի <<Փոքրիկ Իշխան>> կենտրոնի 6 ընտանիքների շրջանում կատարվել է կարիքի վերագնահատում, որի արդյունքում բարելավվել է 6 ընտանիքների 9 երեխաների բնակելի տարածքը: 1 շահառու ընտանիքում իրականացվել է վերանորոգում և կահավորում: 5 շահառու ընտանիքների երեխաներին տրամադրվել է կահույք:
Նվիրաբերված գույքը ներառում է երեխաների համար անկողին, գրասեղան, գրապահարան, աթոռ, պահարան, լուսամփոփ և անկողնային պարագաներ:
Աջակցությունը տրամադրվել է առավել խոցելի այն ընտանիքներին, որտեղ երեխաները չունեն քնի և դասապատրաստման համար առանձնացված մինիմալ պայմաններ:
Կենտրոնի բազմամասնագիտական թիմի կողմից եռամսյա ժամանակահատվածում իրականացվել են պարբերական բնույթի այցեր թիրախ ընտանիքներում:

**14. Ծառայությունում ընդգրկված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների անհատական սոցիալական ծրագրեր:**
Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ԱՍԾ-ներ 66 երեխայի համար և ըստ պլանավորման երեխաներին մատուցվում են կենտրոնի ծառայությունները:

**15. Ծառայության արդյունքում ընտանիքների հետ վերամիավորված երեխաների թիվ:**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը չի աշխատել նման դեպքի հետ:

**16. Ծառայություններ ստացած ԿԴԻՀ երեխաներ, որոնց ծնողները (կամ միակ ծնողը կամ օրինական այլ ներկայացուցիչը) դիմել են երեխային հաստատություն տեղավորելու համար:**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը չի աշխատել նման դեպքի հետ:

**17. Ծառայություններ ստացած երեխաներ (ներառյալ նրանց ընտանիքները), ովքեր հաստատությունից վերամիավորվել են ընտանիքների հետ և անհատական սոցիալական ծրագրի մոնիթորինգի համաձայն կարիք ունեն ստանալու սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական ծառայություններ:**
Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը չի աշխատել նման դեպքի հետ:

**18. Ներկայացված հաշվետվություններ, հիմնավորող փաստաթղթեր և տեղեկատվական համակարգում իրականացված մուտքագրումներ:**
Հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել և ներկայացվել են շահառուների ցուցակները՝ ըստ մատուցվող ծառայությունների:
Մասնագետների կողմից լրացվել և համալրվել են անհրաժեշտ փաստաթղթերը:

## ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<u>Անձնակազմի մասնակցություն դասընթացների/ վերապատրաստումների/ քննարկումների</u>

- Մ/թ փետրվարի 1-ին Գավառի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի կողմից կենտրոնի անձնակազմը հրավեր է ստացել դիտել ներկայացում, որը արժանացավ <<Արտավազդ-2025թ>> թատերական մրցանակաբաշխության երկրորդ փուլին: Միջոցառմանը մասնակցել է կենտրոնի 5 աշխատակից:

- Մ/թ փետրվարի 6-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Գեղարքունիքի մասնաճյուղի կողմից և Գավառի համայնքապետարանի հետ համատեղ կազմակերպված <<Գավառ համայնքում 2024թ. մասնակցային բյուջետավորման արդյունքների և 2025թ. մասնակցային բյուջետավորման գործընթացի մասին>> թեմայով քննարկմանը:

- Մ/թ մարտի 7-ին, կենտրոնի համակարգողը մասնակցել է «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի 2024թ տարեկան հաշվետու միջոցառմանը:

- Մ/թ մարտի 26-ին կենտրոնի թիմի մասնակցել է սուպերվիզային <<Հատուկ կարիքներ, հաշմանդամություն ունեցող և վարքային խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանք>> թեմայով, որը իրականացվել է Հայկական Կարիտասի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան, որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակներում:

- Մ/թ մարտի 27-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի «ԱՐԱՄԱԶԴ. Սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Համայնքային համերաշխության թեյախմություն» ձևաչափով հանդիպում-քննարկմանը:

- Մ/թ մարտի 31-ին կենտրոնի համակարգողը մասնակցել է «Գոյատևել և զարգանալ՝ կառուցելով վերականգնող մանկության» գործիքակազմը թեմայով առցանց քննարկմանը, կազմակերպված Կարիտաս Ավստրիայի կողմից:

*Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համակարգողը անձնակազմի հետ պարբերաբար թիմային քննարկում/հանդիպումներ է իրականացրել հետևյալ թեմաներով՝*

- 2025թ. տարեկան աշխատանքային պլանավորում
- Հաշվետու ժամանակահատվածում գործողությունների քննարկում և պլանավորում
- Ընթացիկ աշխատանքների պլանավորում և վերապլանավորում
- Տնայցերի և դպրոցայցերի ժամագրաֆիկի կազմում և քննարկում
- Սոցիալական աշխատողների կողմից իրականացված առաջնային հետազոտությունների և ընթացիք տնայցերի արդյունքների, դիտարկումների քննարկում
- Դեպքի քննարկում
- Խմբային աշխատանքների պլանավորման կազմում և թարմացում
- Խմբային աշխատանքներում երեխաների ներգրավվածություն
- Պարի խմբում երեխաների ընդգրկվածություն և ընթացիկ քննարկումներ
- Շահառուների սոցիալական և հոգեբանական հիմնահարցեր
- Շահառուների ժամագրաֆիկի հաստատում
- Թիրախ խմբերի կազմում և պլանավորում
- Սոցիալ-հոգեբանական աշխատանքի համակարգում
- Թղթաբանություն/ սոցիալական, հոգեբանական, լոգոպեդական/
- Շահառու երեխաների ծնողների և ընտանիքի անդամների հետ աշխատանքի պլանավորում
- Գործողությունների և պարտականությունների բաշխում կենտրոնի աշխատակազմի շրջանում
- Ամենօրյա սնունդի տրամադրում երեխաներին և խոհանոցում ժամերի հստակեցում
- Հաշվետվության պատրաստում, տվյալների ամբողջացում
- Միջոցառումների պլանավորում
- Համայնքային ներառական միջացառումների պլանավորում

<u>**Աշխատանք համագործակից կառույցների հետ:**</u> Հաշվետու ժամանակահատվածում դեպքերի վարման նպատակով կենտրոնը ակտիվորեն համագործակցել է հետևյալ շահագրգիռ կառույների հետ՝

- Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Գեղարքունիքի մասնաճյուղ
- Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն
- Ջինիշյան հիշատակի հիմնադրամ
- Գեղարքունիքի ՏՄԱԿ
- Գավառի երիտասարդների տուն
- Գյումրու Տեխնոպարկ
- Համայնքային դպրոցներ
- Գեղարքունիքի ՏՄԱԿ

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների՝ նշելով Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունները հստակ տեսանելի են, շահառու երեխաները սոցիալապես ակտիվ են, ընդգրկված են համայնքային կյանքում, զգալիորեն բարելավված է նրանց կյանքի հմտությունների որակը:
Բոլոր շահառուների համար կազմվել են ԱՄԾ-ներ:
Երեխաները և նրանց ընտանիքի անդամները ներգրավվելով ծառայություններում ձեռք են բերել վստահություն կառույցի և մասնագիտական թիմի նկատմամբ, ինչը հիմք է հանդիսացել անահատկան դեպքերի վարմանը:
Շահառու ծնողներին ներկայացվել է Հայկական Կարիտասի անվտանգության քաղաքականությունը և նրանք մշտապես ազատ կարողացել են արտահայտել իրենց կարծիքը և միտքը կենտրոնի կողմից իրականացվող ծառայությունների վերաբերյալ:

Սույն հաշվետվության մեջ նկարագրված բոլոր գործողությունները նպաստել են երեխաների սոցիալական ներառմանը, նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների ու կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը: Կենտրոնի կողմից տրամադրված ծառայությունների արդյունքում երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրվել են սոցիալ-վերականգնողական խորհրդատվություն և աջակցություն, որը խթանել է երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխել է նրանց սոցիալական մեկուսացումը:

Սոցիալական աշխատողների և հոգեբանի կողմից իրականացվող խմբային աշխատանքներում ներգրավվածությունը նպաստել է երեխաների փափուկ հմտությունների, հաղորդակցման և բանակցային հմտությունների զարգացմանը, նրանք ձեռք են բերել առաջնորդական հմտություններ: Արտ թերապիայի շնորհիվ երեխաների ստեղծարար միտքը զարգացել է: Թերապիաները նպաստել են վերջիններիս հոգեբանական խնդիրների հաղթահարմանը:
Կենտրոնում երեխաները օգտվել են լոգոպեդի ծառայությունից և հաշվետու ժամանակահատվածում ըստ մասնագետի դիտարկման առկա է դրական առաջընթաց:
Պարի խմբակը նպաստել է երեխաների սոցիալականացմանը, առողջ կենսակերպին և պարային հմտությունների յուրացմանը:
Կենտրոնում տրամադրվող տաք սնունդը երեխաների համար ևս ունի կենսական նշանակություն, քանի որ դպրոցից անմիջապես հետո նրանք կենտրոն են հաճախում ու սննդային ընդմիջումից հետո երեխաները կարողանում են էներգիայով լեցուն մասնակցել հետագա գործողություններին: Շատ երեխաների համար սնունդը մեծ նշանակություն ունի քանի որ տանը այս կարիքը շատ խորն է սոցիալական դժվարին պայմանների պատճառով:
Արցախից տեղահանված ընտանիքի երեխաները աղապտացվել են միջավայրին, կենտրոնում իրենց ապահով են զգում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

- Ծրագրի գործընկեր Կարիտաս Ավստրայի կողմից հրապարակված հոդվածներ, որնցում նկարագրվում է կենտրոնի երկու շահառուների մասին հաջորդական պատմություն, այն մասին թե վերջիններս կենտրոնում մատուցված ծառայությունների արդյունքում ինչպես են սոցիականացավել և ինտեգրվել հասարակության մեջ Արցախյան պատերազմից բռնի տեղահանման պատճառով:
  https://www.facebook.com/photo/?fbid=1055019576554119&set=a.487811910041558
  https://www.facebook.com/photo/?fbid=1048162864006457&set=pcb.1048163024006441

- Թեմատիկ դասընթացների շարք. Շրջական միջավայրի պահպանություն, անձնական հիգիենայի վերաբերյալ
  https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid073z6WTaR1xaYL8N4LrQ4UHBoJoc4KA8wg8DpR9qawqLcgF6ZwpukvWfDKLPvjckTl

- Հանդիպում աշակերտական խորհրդի անդամների հետ
  https://www.facebook.com/photo/?fbid=497092626790413&set=pcb.497094803456862

- Կիբեռանվտանգության և կիբեռհիգիենայի թեմայով դասընթաց
  https://www.facebook.com/GyumriTechnologyCenter/posts/pfbid0GXXpXDxjvrjQdtVCmIPGZWcM3VLfLi8Zoids4Byost8LrGBgiwoM7A2f4x25qSWyl

- Կանանց միջազգային տոնին նվիրված միջոցառում
  https://www.facebook.com/photo/?fbid=1061224979375102&set=pcb.1061226182708315

- Կենտրոնի առաջնորդների խմբի կողմից իրականացված միջոցառումներ
  https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0pqUUA6QyaNjdWXgGNsMF7ydGLMXmyb1grTZiGBii1YeELnL594FsUpp961pAzVWfl

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Քաղաքային տրանսպորտի բացկայության և ժամերի, ինչպես նաև ֆինանսական միջոցաների բացակայության պատճառով որոշ երեխաներ չեն կարողանում հաճախել կենտրոն:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ եռամսյակում կշարունակվեն մատուցվել ծրագրով նախատեսված ծառայությունները:

Մասնավորապես պլանավորվում են իրականացվել հետևյալ գործողությունները՝

- Դասընթացներ և վերապատրաստումներ՝ ուղղված կենտրոնի մասնագիտական թիմի կարողությունների զարգացմանը
- Կենտրոնի կամավորի ներգրավմամբ նկարչական խմբի աշխատանքի մեկնարկ
- Սուրբ Հարության տոնին նվիրված միջոցառում
- Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման օրվան նվիրված խմբային աշխատանք
- Երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանը ուղղված միջոցառումների շարք
- Աշխատանքի օրվան նվիրված խմբային աշխատանք
- Հաղթանակի և խաղաղության օրվան նվիրված խմբային աշխատանք
- Հանրապետության օրվան նվիրված խմբային աշխատանք
- Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում
- Հասակակիցները հասակակիցների համար սոցիալ-կրթական ճամբարի նախապատրաստական աշխատանքներ
- Ներառական համայնքային միջոցառում արտթերապիայի միջոցով
- Ծնողավարման հմտությունների զարգացմանը ուղղված դասընթացներ և ինքնաօգնության խմբերի աշխատանք
- Աշխատանք թիրախ խմբերի հետ
- Շահագրգիռ կառույցների հետ աշխատանքային հանդիպում/քննարկումներ
- Առաջնային հետազոտություն և շահառուների ընդգրկում

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

**Հանդիպում աշակերտական խորհրդի անդամների հետ:** Մ/թ մարտի 4-ին Ծովազարդի միջնակարգ դպրոցի ԱԽ կազմի կողմից իրականացվող «Կարգապահության հետքերով» ենթանախագծի շրջանակներում ԱԽ անդամները հյուրընկալվել և վերապատրաստում են անցել Հայկական Կարիտասի Գավառի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի հոգեբան Արդա Հակոբյանի կողմից:
Հանդիպման ընթացքում մասնակիցներին ներկայացվել է կենտրոնի գործունեությունը, ներկայացվել է հոգեբանի մասնագիտությունը և մատուցած ծառայությունը:
Հաջորդիվ անդրադարձ է կատարվեց 1-7-րդ դասարանների աշակերտների մտավոր ու ֆիզիկական զարգացման առանձնահատկություններին: Նշվել են վերջիններիս հետ աշխատելու համար կիրառելի մոտեցումներն ու շեշտադրումները:
Հանդիպումը իրականացվել է Զինիչյան հիշատակի հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում:
Հանդիպմանը մասնակցել է **10 երեխա ՝ 6 աղջիկ, 4 տղա:**

| Պատվիրատու | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| ք. Երևան, Կառավարական տուն-3 | ք. Գյումրի , Հ.Սարգսյան 3-րդ նրբ., 8ա. |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»ՓԲԸ «Շիրակ»մ/ճ |
| Հ/Հ 900011030732 | Հ/Հ 220063350387000 |
| ՀՎՀՀ 01506515 | ՀՎՀՀ 05514397 |
| Գլխավոր քարտուղար՝ Սամվել Մուրադյան | Գործադիր տնօրեն՝ Գագիկ Տարասյան |
| (անուն ազգանուն, ստորագրություն) | (անուն ազգանուն, ստորագրություն) |
| Կ. Տ. | Կ. Տ. |